ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 97

«21» 12 2021 թ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 39 ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կայազորների զինվորական դատախազությունների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 18-րդ հոդվածի 2-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 2-րդ մասի 8-րդ կետով և 21-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության գործունեությունը դադարեցնել:
2. Թիվ 3 կայազորի զինվորական դատախազությունը անվանափոխել թիվ 2 կայազորի զինվորական դատախազություն:
3. Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի գործունեությունը դադարեցնել:
4. Թիվ 3 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժինը անվանափոխել թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին:
5. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019

թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանի հավելվածի 29-րդ կետի 24.10-րդ ենթակետը և 31-րդ կետի 51-րդ ենթակետը:

6. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 19 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի N 2 հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետը և N 3 հավելվածի 51-րդ կետը.

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

9. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ